

## ՀԱՅ ԴՐԱՍԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Հ. կղեմէս Սիպիլեանի «Դասաւորութիւնն իրարինեան Դրամոց» անուն երկին 77-րդ էջին մէջ, (յաւելուած Հեղինակին) կը խօսուի լևոն թ.ի իշխան եղած ժամանակ զրոշմել տուած զրամներուն վրայ, որոնք հազորագիւտ ալ են արդէն:

Բայտ Հ. Սիպիլեանի հաւասարութիւն միայն երկու հատ պղինձ զրամ գտնուած է այդ շրջանէն . . . «ուրիշ երրորդ պղինձ մը և տեսնուած չէ, և ո՛չ ալ արծաթի այս և ձեռվ զրամ մ'երնցած է, որուն զիւտը «շատ ցանկալի է, թէպէս չի յուսաւ ցուիր»:

Մօտաւորապէս քառասուն տարի անցած է «Դասաւորութիւն իրութիւնեան Դրամոց»ի հրատարակութիւնն ի վեր, և



չեմ զիտեր ալ թէ յետ այնու արդեօք բարերախտ զիւտ մը եկած է ժիւտելու Հ. Սիպիլեանի յուստիսութիւնը:

Եւս սակայն, ուրախ եմ յայանելու որ բախտն ունեցայ ձեռք անցընելու լևոն թ.ի պղինձ զրամ մը, զրոշմուած իր իշխան եղած ժամանակ:

Դիւտը շահնեկան է ո՛չ թէ անոր համար որ հազորագիւտ զրամի երրորդ օրինակ մը մէջտեղ կ'ելէ, այլ անոր համար որ, իմ ձեռք անցուցած օրինակով կարելի կ'ըլլայ սրբազնել սխալ ընթերցանութիւն մը անոր արծանազրութեան, որ մէջ բերուած է Հ. Սիպիլեանէ:

Յիշարսի՝ Հ. Սիպիլեան, այսպէս կը կարդայ այդ զրամին արծանազրութիւնը:

Ա. կ. Լեվոն Ժառանգ՝

Բ. կ. Որդի Ստեփանէի

Ուշագ ալ Հ. Սիպիլեան ջանայ բացատրել, թէ . . . «Թագաւոր բառը զնել

չկարենալով՝ ժառանգ բառով գոն եղեր է», պարզ է որ, բացատրութիւնը ցիշ մը բաշեցուք է, և «Ժառանգ» բառը զբել անիմաստ:

Արդ, իմ ձեռք անցուցած օրինակիս վրայ, որ կատարելապէս նոյնն է Հ. Սիպիլեանի ստորազրած օրինակին, երկու կողմի պատկերներով, — (Ա. կողմ թաւաւորն ասպետական զգեստով ու ձեռվ ձախ կողմէն կը ժիավարէ, զլուին երկաթէ սալտաւրտ. թ. կողմ. Զարդարուն խաչ, չորս անկիւնները մահիկ) — ու նոյն իսկ ձաւլով, շատ որոշ կը կարդացուի.

Ա. կողմ. Լեվոն Մառա Այ

Բ. կողմ. Որդի Ստեփանէի

թիւրես առարկուի, թէ իմ ձեռք անցը-

նել յաջողած զրամը փոփոխակ մըն է արդէն գոյութիւն ունեցողին, ինչպէս որ կլիկեան Հայ զրամներ այլազան փոփոխակներով մէջտեղ ելած են,

Բայց կը տարուիմ մտածելու թէ Հ. Սիպիլեան, լաւ չպահպանուած օրինակ մը ձեռք անցուցած ըլլալուն, սխալ ընթերցանութիւն մ'ըրած, և ըստ այնմ աէ արծանազրած է:

Կրկին ուշագիր զնութիւն մը, այդ օրինակին արծանազրութեան, հաւանօրէն հասարակէ. իմ ենթադրութիւնս, ու այս ձեռվ վերջնականօրէն ճշդուի մեր պատութեան ամենէն փայլուն դէմքերէն մէկուն դրոշմել տուած զրամին ստորագրութիւնը:

Ա. Ե.

1. Մեր թանգարանն եւս ումի նոյն այդ պղինձէ դրամէն, Սիպիլեանի մէջ (էջ 483) Ալեքսան հրատարակութ է կարգալով Հ. Սիպիլեանի նման, լր. թ.